ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www. artik.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հունվարի 2025 թվականի N 11-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՆՅԱ ԱԹՈՅԱՆԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ընթացակարգի 3-րդ և 7-րդ չափաբաժինների մատակարարման մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած անհատ ձեռնարկատեր Մանյա Աթոյանը /այսուհետ վաճառող/, ում հետ պետք է կնքվեր «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար հավի մսեղիք /պաղեցրած ամբողջական հավ / և հավի մսեղիք /պաղեցրած կրծքամիս/ մատակարարման գնման պայմանագիր: Անհատ ձեռնարկատեր Մանյա Աթոյանը գրություն է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան սույն թվականի հունվարի 8–ին, որ վերջինս հրաժարվում է պայմանագրով ստանձնած բոլոր գործընթացներից, ինչպես նաև գնման բոլոր գործընթացներից և չի պարտավորվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի բյուջեի եկամտային հաշվին փոխանցել որոկավորման և պայմանագրի ապահովումը:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ենթակետով, բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Միևնույն ժամանակ ընթացակարգի հրավերի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը /այսուհետ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների

նախարարությունը/ մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ուսումնասիրելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ենթակետի պահանջները և հիմք ընդունելով «ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի սահմանված պատասխանատու հանձնաժողովի կողմից տրված 2025 թվականի հունվարի 9-ի զեկուցագրով անհատ ձեռնարկատեր Մանյա Աթոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացրած փաստը

ՈՐՈՇԵՑԻ

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած և հետագայում ի հայտ եկած այլ՝ սույն որոշմամբ ներկայացված հիմքերը անհատ ձեռնարկատեր Մանյա Աթոյանին (ՀՎՀՀ 49811276 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ք. Արմավիր) ներառյալ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գնահատել բավարար:
2. Անհատ ձեռնարկատեր Մանյա Աթոյանին ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

անվանում	ՀՎՀՀ	գործունեության հասցե	խախտվել է գնման գործընթացը	որպես ընտված մասնակից	համայնքի ղեկավարի որոշումը
Ա/Ձ Մանյա Աթոյան	49811276	ՀՀ ԱՄ ք. Արմավիր	Խախտվել է գնաման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները	Հրաժարվել է պայմանագրով ստանփնած պարտավորություններից	09.01.2025թ-ի թիվ 11-Ա

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կնքման օրվանից:
Գնումների օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, 4-րդ կետի համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2025 թվական հունվարի 09